կել։ Ղարաբաղի մելիքները՝ իրենց լեռներում եւ Դաւիթ Բէկը՝ Ղափանում մի քանի տարի քաջութեամբ պաշտպանուեցին, բայց միշտ աչքերնին դէպի հիւսիս յառած, այնտեղից փրկութիւն սպասելով։

Ի հարկէ, սպասուած օգնութիւնը չհասաւ, թէեւ իր կողմից էլ Մինաս վարդապետը, Օրբի եւ Պետրոս Մեծի մահից յետոյ, դեռ շարունակում էր թափառել Ռուսաստանում եւ արքունիքի դռները բախել։

Տաճիկները առաջանալով, հեշտութեամբ տիրեցին Վրաստանին եւ կամենում էին գրաւել նաեւ Կասպիականի արեւմտեան ափերը — Դերբենդը, Բաքուն, Լինքօրանը եւն.։ Սահմանների ընդարձակման հետ միասին՝ դա նրանց անհրաժեշտ էր կրկին նպատակներով.— առաջին՝ ռուսներին հեռու պահել Անդրկովկասի սահմաններից եւ ուրեմն չթոյլատրել նրանց միջամտելու արեւելքի գործերում։ Երկրորդ՝ միանալու համար Կասպից ծովից դէպի արեւելք գտնուող մահմեդական ժողովուրդներին— համիսլամական ձգտումներ — որպէսզի այդպիսով իրենց մէջ առնեն եւ մահմեդականութեան ծովի մէջ խեղդեն Անդրկովկասի երկու քրիստոնեայ ազգերին — հայերին եւ վրացիներին։

Վրաստանին տիրելուց յետոյ՝ նրանց մտնում էր իրենց իշխանութեան տակ ձգել դէպի Կասպից ծովը տանող երկրորդ ճանապարհը եւս — Լեռնահայաստանը։ Դրա համար էլ Սարը Մուստաֆա փաշան իր զլխաւոր բանակով ամրանալով Գանձակում, զօրքեր է ուղարկում առաջին հերթին բուն Ղարաբաղը գրաւելու։ Մելիքները հերոսաբար դիմադրում են, մանաւանդ Դիզակի տէրը՝ մելիք Աւան խանը, որ միւսներից աւելի զօրեղ էր։ Նա դաւով մի կիրճում փակում է տաճիկներին եւ չարաչար ջարդում։ Սարը Մուստաֆա մի գլուխ փախչում է Երեւան։ Սակայն պիտի ասել, որ տաճիկները յաջողութիւն ունեցան Դաւիթ Բէկի դէմ մղած կռիւներում եւ նրա հիմնած անկախութիւնը խորտակեցին։

Նադիր Շահը զօրանալով, քշում է տաճիկներին Անդրկովկասից եւ ռուսներից էլ յետ է խլում Կասպիականի ափերը։ Նա հայ մելիքներին կրկին վերահաստատում է իրենց իշխանութեան մէջ, որովհետեւ նրանք արիաբար կռուել էին իր թշնամիների՝ տաճիկների դէմ եւ նրանց մեծ հարուածներ հասցրել։ Նրա այդ քայլը նաեւ դիւանագիտական մի խելօք խաղ էր — նախ՝ իր թագաւորութիւնը հայ մելիքներին ճանաչել տալու, երկրորդ՝ այդ վերջիններին Ռուսաստանից հեռու պահելու տեսակէտից։

3.

Այդպէս ուրեմն, հայերի ակնկալութիւնները Ռուսաստանից այս անգամ նոյնպէս ի դերեւ ելան, ինչպէս ապարդիւն էին անցել նրանք Արեւմուտքից։ Պետրոս Մեծը, իր գործերը Կասպիականի ափերում կարգադրելուց յետոյ, ժամանակը յարմար չհամարեց Հայաստանի ազատութեան համար, թէեւ մինչեւ իր կեանքի վերջը նա շարունակեց յուսադրել հայերին եւ անկախութեան տենչը վառ պահել նրանց սրտերում։

Բայց պիտի արձանագրել, որ ռուսական օրիենտացիան, մասնաւորապէս Պետրոս Մեծի յուսադրումները, մէկ շատ խոշոր արդիւնք ունեցան մեր երկրի ու ժողովրդի համար։ Դա այն է, որ նրանք առիթ եղան, մի տեսակ խթան, հայ զինուորութեան, հայ մարտական ուժերի կազմակերպման։

Դեռ աւելի. ինքը Դաւիթ բէկն անգամ արդիւնք էր այդ յուսադրումների։ Նա մեր իրականութեան մէջ ասպարէզ եկաւ Պետրոս Մեծի թելադրանքների հետեւանքով։ Երբ նա՝ Պետրոս Մեծը՝ առաջարկեց հայերին զինուել եւ իր գալու հետ միասին զէնք բարձրացնել, հայերը ահա այդ ժամանակ դիմեցին վրաց Գէորգ Շահ-Նաւազ թագաւորին եւ խնդրեցին մէկ հրամուտ զօրավար՝ հայ զինական ուժերը կազմակերպելու եւ ղեկավարելու համար։ Գէորգ արքան էլ ուղարկեց Դաւիթ բէկին, որը Վրաստանում զինուորական ծառայութեան մէջ էր եւ մեծ անուն էր հանել իր քաջագործութիւններով։

Շարունակութիւնն արդէն ամէնքին յայտնի է։ Դաւիթ բէկը կարճ ժամանակի ընթացքում գեղեցիկ ձեւով կազմակերպեց հայ զօրքը եւ ստեղծեց մի պատկառելի ոյժ։ Մի քանի տարի անընդհատ նա կռիւներ մղեց, հերոսական կռիւներ, Հայաստանի ներքին եւ արտաքին